ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Սյունիքի մարզ, 3301, ք.Կապան, Գ.Նժդեհի 1, Հեռ.՝ +374 60 517822, +374 285 44291, Էլ.փոստ՝ syunik@mta.gov.am

«30» 03 2023թ., № 01/12/02174-2023

Ձեր՝ « » 2023թ., №

Կապան համայնքի ղեկավար պարոն Գ.Փարսյանին

Գորիս համայնքի ղեկավար պարոն Ա. Առուշանյանին

Սիսիան համայնքի ղեկավար պարոն Ա. Հակոբջանյանին

Քաջարան համայնքի ղեկավար պարոն Մ. Փարամազյանին

Մեղրի համայնքի ղեկավար պարոն Բ. Զաքարյանին

Տեղ համայնքի ղեկավար պարոն Դ. Ղուլունցին

Տաթև համայնքի ղեկավար պարոն Ս. Լալայանին

Հարգելի համայնքի ղեկավարներ

ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը ներկայացրած, Կապան համայնքի Զորաստան գյուղում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերից, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի «գյուղատնտեսական արտադրական հողեր» գործառնական նշանակությամբ հողամասի նպատակային նշանակության փոփոխության նպատակով կազմված հողաշինարարական գործի քննարկման արդյունքում միջգերատեսչական հանձնաժողովի անդամ հանդիսացող Կադաստրի կոմիտեն իր դիրքորոշման (կցվում է) մեջ նշել էր, որ համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ մասի ջերմոցային, անասնապահական, թռչնաբուծական, պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության, գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսությունների, ոռոգման նպատակով մինչև 100 հազար խորանարդ մետր ծավալով ջրավազանների կամ ձկնաբուծական արհեստական լճակների կառուցման համար

նախատեսվող հողամասի նպատակային նշանակությունը, բացառությամբ հատուկ պահպանվող տարածքների, փոփոխված է համարվում պարզեցված կարգով միայն սեփականատիրոջ հայտի համաձայն համայնքի ավագանու կողմից այդ հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և համայնքի ղեկավարի կողմից տվյալ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո, որոնք արտացոլվում են հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

Ելնելով վերոհիշյալից, առաջարկում ենք Ձեզ, հողամասի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության «գյուղատնտեսական արտադրական հողեր» գործառնական նշանակությամբ փոխադրելիս առաջնորդվել ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ մասով սահմանված կարգով:

Առդիր՝ 2 թերթ:

Восстановимая подпись

X

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

Ռ. Ղուկասյան

Հարգանքով՝

Կատարող՝ Մ. Կոստանդյան
Հեռ.՝ (0285) 44273, (094)004488
Էլ.փոստ՝ syunik.hoghshin@mta.gov.am